

Բարձր բերքատվություն գյուղական համայնքներին



HDP-ն Ջինիշյան հիմնադրամի և UNDPի միջոցով իրագործում է Միթլայդերի «Բարձր բերքատվությամբ այգեգուծություն» ծրագիրը Հայաստանի հինգ համայնքներում՝ Շենիկ, Արգինա, Արագածավան, Խարբերդ և Քարակերտ: Ծրագրում ընդգրկված են 90 կարիքավոր ընտանիքներ: Այս մեթոդի ճիշտ կիրառման դեպքում նրանց սպասվում է բարձր բերք, բավականաչափ եկամուտ և տնտեսական կայունություն:



Համայնքներին ներկայացվել են ծրագրի նպատակները, այգեգործության այս նոր մեթոդի էությունը, շահառուների ընտրության չափանիշներն ու նրանց պարտականությունները: Իսկ գործնական դասընթացների ընթացքում HDP-ի միջազգային խորհրդատու Ջին Քենարդը այգեգործներին ցուցումներ է տվել այս մեթոդի մարզերի պատրաստման, հողամասերի ընտրության, պարարտանյութի և այլ անհրաժեշտ պայմանների վերաբերյալ:



Ցուցումներին հետևելու դեպքում կարելի է 5-10 անգամ ավելի շատ բերք հավաքել:



Օրինակ, անցյալ տարվա ծրագրի 64 ընտանիքների մոտ ամենահամեստ հաշվարկներով 100-150% բերքի ավելացում գրանցվեց: Ծրագրի հիմնական բաղադրիչներից է ուսուցումը: Պրն.Քենարդին օգնում էին HDP-ի գյուղատնտես Գնել Մխիթարյանը և Ծրագրի օգնական Ռուզան Տեր-Ղազարյանը:

Մեր շահառուները մեծ մասամբ կարիքավոր ընտանիքներ են, որոնց մենք փորձում ենք եկամուտի և տնտեսական կայունության հնարավորություններ տալ:



Այսպես են ապրում մեր շատ շահառուները



Այսպես է HDP-ն փոխհատուցում

Մերների Բաշխում 2005

Արդեր երրորդ տարին է, ինչ HDP-ն, համագործակցելով UMCOR-ի հետ, բանջարաբուստանային սերմեր է բաժանում Հայաստանի կարիքավոր ընտանիքներին: Այս ծրագրի նպատակն է օգնել Հայաստանի գյուղացիներին՝ ինքնուրույն զոյատևելու, զարգացնելու իրենց հողագործական հմտություններն ու գիտելիքները և, ի վերջո, առողջարար սնունդ ստանալ: Ուրախ ենք հայտնելու, որ այս տարի շահառուների ընդհանուր թիվը 4.400-ից ավելի է Հայաստանի տարբեր շրջաններում:



Մերներ ցանկացողների քանակը այս տարի շատացավ՝ ընդգրկելով Շիրակի, Ապարանի, Գեղարքունիքի, Արմավիրի, Տավուշի, Սյունիքի մարզերը:



Մերների բաշխման գործում մեզ դարձյալ օգնության եկան HDP-ի կամավորները, որոնք օգնեցին պատրաստել ընտանեկան տոպրակներ. իսկ գյուղական համայնքների շահառուները կամավոր սկզբունքներով օգնեցին բաշխել սերմերը, կազմել ցանկեր, և այլն: Մերների բաշխման գործում մեզ օգնեցին Խաղաղության Կորպուսի (PC) կամավորներ Մեթյու Սոնիաթը, Մերի Ջիրգերսոնսը, Նիք Գայամերիան:

Ի ուրախություն մեզ, բանջարեղենի սերմերի բոլոր տեսակները ցանվել էին: Շահառուները գոհ էին արդյունքներից: Ի լրումն, շատերի այգիները կգեղեցկանան հրաշալի ծաղիկներով և կշերմացնեն մարդկանց սրտերը:

Այսպիսով, 2005թ. UMCOR-ից ստացված սերմերից HDP-ի բաշխման արդյունքում օգտվեցին 4460 ընտանիք:

“Եթե Աստված քեզ փող է տվել, առատաձեռն ողորմիրիչներին օգնելու” /Romans 12:8/



HDP Հիմնադրամ

Հ.Ն.Յ.Ի.Ի
ԹՀՄՅՅ 1ՀԻ

ՆԵՐՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ 2005